

Երբ Գրիգոր դուրս ելաւ, ծեր զօրավարին խրատներուն ճշտութեամբ հետեւեցաւ. չորս հարիւր հոգուոյ խումբ մը իրեն կը յանձնէր Ռշտունեաց Տիկինը, Նոցայ ամեն պետքը գիր առած՝ գնաց Յուսիկի հետ խօսեցաւ քաղցրութեամբ՝ շոյելով անուշ, սպառնալիքներ ընելով եւ Նորա հոգին ու սրտեն յաջողեցաւ իւր ամեն ուզածը փրցնել:

Երկրորդ առաւօտուն Թենի Ոստանին պատշգամբեն կը տեսնէր երիտասարդ զօրավարը, որ Նաւերու վրայ բարձած իւր փոքրիկ խումբը եւ Նոցայ պիտոյքը կը Նաւարկէր Աղթամարայ ծովուն արեւելման, հիւսիսային կողմը, եւ երբ հեռացաւ առաւ Չաւենի ձեռքէն Փարպեցիի հատորը, եւ գրքին վերջի պարապ էջերը գտաւ մանր, փոքրիկ, գեղեցիկ գրերով յիշատակարան մը այն ամեն Յուսահատական եւ տխուր զգացմանց, որ ունեցեր էր Թենի այն չորս երկայն տարիներու բաժանման, ուր երբեմն իր սիրելոյն մահը կ'ողբար, երբեմն յուսոյ Նշոյլ մը կը զգար, երբեմն միանձնուհի լինելու փափագներ կը յայտնէր, երբեմն զինք հարսնութեան ուզող երիտասարդաց վրայ դատողութիւններ կ'ընէր: Վերջապէս այդ գրութեան մէջ կը տեսնէր Գրիգոր աղջկան հաստատամտութիւնը իւր սիրոյն վրայ, եւ այդ չորս տարուան միջոցին իւր մտաւոր կատարելութեանց զարմանալի զարգացումը մարդիկ եւ երկիրը դատելու վրայ:

Ո՛վ կրնայ պատմել Չաւենի ուրախութիւնը, որ կը տեսնէր Գրիգոր հրամանատար փոքր խմբի մը, որ յառաջաբան եւ սկիզբն կը համարէր իւր իշխանիկին. արդէն ինք առանց Գրիգորի եւ Թենիի սիրոյն գաղտնեաց տեղեակ լինելու՝ իւր մտքին մէջէն հաւանութիւն անէր էր Նոցայ ամուսնութեան, եւ իրեն համար այդ ժամանակի խնդիր էր. ուստի մինը կարդալով եւ միւսը երագելով եւ երկուքն էլ մէկ-մէկ քիչ քուն լինելով՝ հասան Բերկրուոյ մօտ ցամաքը, եւ անկից ուղեւորեցան Մարդաստան՝ ուր գտան Արծրունեաց Նախարարը, որ առաջ Գրիգորի երիտասարդութեան խորհրդածեց մտքէն, երբ Նորատեգ մորուք երիտասարդ մը տեսաւ. բայց երբ փոքրիկ խազմեր տեղի ունեցան եւ տեսաւ տղուն շրջահայեաց յանդգնութիւնը, գուշակութեան ոգին, որ թշնամեաց ամեն շարժմունք կը Նախատեսէր եւ կը հարուածէր, ուղղութեան եւ արդարութեան ոգին, որ մեծին ու պզտիկին վստահութիւն կը բերէր, իւր գունդերն էլ իրեն յանձնեց ու գնաց Վանտոսպ: Եւ լի գովութեամբք շնորհակալութեան Նամակ մը գրեց Ռշտունեաց Տիկնոջ իւր ընտրութիւնը շնորհաւորելով: Իսկ Գրիգոր՝ Արծրունեաց Նախարարին հեռանալէն օգուտ քաղելով՝ յարձակեցաւ մինչեւ Կ'ապուտան ծով, սարսափ ձգեց բոլոր մեծ ու պզտի բռնաւորաց վրայ, որ Պարսից տերութեան իյնալէն անիշխանութեան հետեւանք եւ ծնունդք էին, եւ